Կարգապահական գործ թիվ 20186

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2021թ-ի փետրվարի 09-ի թիվ 249-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԹԻՎ ԿԳ/147-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ),** նիստը նախագահող՝ Խորհրդի անդամ Արայիկ Ղազարյանի, Խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Սիմոն Բաբայանի, Գայանե Դեմիրչյանի, Տիգրան Խուրշուդյանի, Հարություն Հարությունյանի, Կարեն Մեժլումյանի, Կարեն Սարդարյանի և Արմեն Ֆերոյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Աստղիկ Գևորգյանի,

քննության առնելով փաստաբան Արթուր Հարությունյանին (արտոնագիր՝ 2179) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Օնիկ Գասպարյանը (**այսուհետ՝ նաև Դիմող**), դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետ՝ նաև Պալատ**), հայտնել է հետևյալը.

Փաստաբան Արթուր Հարությունյանը (**այսուհետ՝ նաև Փաստաբան**) 23.10.2020թ. ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ է ներկայացրել դիմում՝ փաստաբանական գործունեության արտոնագրի գործողությունը վերականգնելու վերաբերյալ: Փաստաբանը մինչև 23.12.2020թ. գտնվել է ՀՀ պաշտպանության նախարարության տրամադրության տակ և ստացել է դրամական ապահովություն, ուստի նրա արտոնագրի գործողությունը չէր կարող վերականգնվել 29.10.2020թ-ին:

Մեջբերելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի իրավական կարգավորումը, Դիմողը նշել է, որ Փաստաբանը կեղծ տեղեկություններ է ներկայացրել Պալատի խորհրդին, քանի որ նա ՀՀ ԶՈՒ պահեստազոր է արձակվել ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետի 04.02.2020թ. հրամանով և փաստացի լինելով զինծառայող, 2019թ. հոկտեմբերի 29-ից վերականգնել է իր արտոնագրի գործողությունը:

Դիմողը խնդրել է փաստաբանի նկատմամբ հարուցել կարգապահական

վարույթ:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 23.10.2020թ. թիվ 371-Ա/ԿԳ-20186 որոշման հիման վրա փաստաբան Արթուր Հարությունյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ՝ նաև Օրենք)** 19-րդ հոդվածի 2-րդ կետի, 38-րդ հոդվածի 7-րդ մասի, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ նաև Կանոնագիրք)** 2.5.1 և 2.9.3 ենթակետերի պահանջների խախտման հիմքով:

23.10.2020թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Հունան Բաբայանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

3. <u>Դիմողի և Փաստաբանի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

<u>3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.</u>

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը բացատրություն չի ներկայացրել:

Խորհրդի նիստին ներկայացել են Դիմողի ներկայացուցիչներ Կառլեն Միրզոյանը, Գրետա Սարգսյանը և Սիրանուշ Հարությունյանը:

Նիստի ընթացքում Դիմողի ներկայացուցիչ Կառլեն Միրզոյանը վերահաստատել է դիմումով հայտնածը: Նա մեջբերելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի իրավական կարգավորումը՝ նշել է, որ Փաստաբանը կեղծ տեղեկություններ է ներկայացրել Պալատի խորհրդին, քանի որ նա ՀՀ ԶՈՒ պահեստազոր է արձակվել ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետի 04.02.2020թ. հրամանով և, փաստացի լինելով զինծառայող, 2019թ. հոկտեմբերի 29-ից վերականգնել է իր արտոնագրի գործողությունը:

Վերջինս պնդել է, որ անձը դադարում է համարվել զինծառայող, երբ նրա անունը զինվորական ծառայությունից արձակման կապակցությամբ անձնակազմի ցուցակներից հանվում է, մինչդեռ փաստաբան Արթուր Հարությունյանի պարագայում մինչև 04.02.2020թ-ը նման հրաման արձակված չի եղել, դեռ ավելին՝ վերջինս ստացել է կարգադրագիր ներկայանալու կադրերի վարչություն և հաստիքների կրճատումից հետո մոտավորապես 2 ամիս վերջինս հանդիսացել է զինծառայող և ստացել է վարձատրություն:

Դիմողի ներկայացուցիչը նաև հայտնել է, որ Փաստաբանը հայցադիմումներ է ներկայացրել ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի դեմ պաշտոնի վերականգնման և գումարի բռնագանձման պահանջներով, որոնցում հստակ նշել է, որ ինքը հանդիսացել զինծառայող և, որ հնարավորություն չի ունեցել այլ գործունեություն ծավալելու:

Ըստ Դիմողի ներկայացուցչի փաստաբանը երբևիցե չի դիմել իրենց և չի հայտնել փաստաբանական գործունեությունը վերսկսելու մտադրության մասին, չնայած ունեցել է նման պարտավորություն: Դիմողը տեղեկացել է, թե երբ է փաստաբանի արտոնագրի գործողությունը վերականգնվել՝ միայն ՀՀ փաստաբանների պալատ կատարված հարցման արդյունքում:

Դիմողի ներկայացուցիչը նաև պնդել է, որ Փաստաբանը սուտ տեղեկություններ է ներկայացրել Պալատի խորհրդին, քանի որ եթե փաստաբանի արտոնագիրը վերականգնվել է, ուրեմն վերջինս ոչ ճիշտ տեղեկություններ է տրամադրել Պալատի խորհրդին: Մասնավորապես՝ Դիմողի ներկայացուցիչը կեղծ է համարել փաստաբանի կողմից Պալատի խորհրդին ուղղված դիմումում տեղ գտած հետևյալ նախադասությունը «*հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերացել է փաստաբանության մասին ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված փաստաբանական գործունեության արտոնագրի գործողության կասեցման հիմքը*», քանի որ Փաստաբանի արտոնագրի գործողության կասեցման հիմքը դիմումը ներկայացնելու պահին վերացված չի եղել:

Դիմողի ներկայացուցիչը փաստել է, որ 11.10.2019թ. թիվ 1910-Ա հրամանը եղել է վերնագրված զբաղեցրած պաշտոնից ազատելու և կադրերի տրամադրության տակ թողնելու մասին, մինչդեռ 04.02.2020թ. հրամանը վերնագրված է եղել զինված ուժերի պահեստազոր արձակելու մասին:

3.2. <u>Փաստաբանի համառոտ բացատրությունները.</u>

Գործի նախապատրաստման ընթացքում Փաստաբանը ներկայացրել է բացատրություն, որով հայտնել է հետևյալը.

ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետի 2019 թվականի հոկտեմբերի 11-ի «Զբաղեցրած պաշտոնից ազատելու և կադրերի տրամադրության տակ թողնելու մասին» N 1910-Ա հրամանով Փաստաբանը 2019 թվականի սեպտեմբերի 16-ից ազատվել է ՀՀ պաշտպանության նախարարության 10564 զորամասի իրավաբանական բաժնի սպայի պաշտոնից: Նշված հրամանի բառացի մեկնաբանությունից ակնհայտ է դառնում, որ Փաստաբանն ազատվել է զբաղեցրած պաշտոնից և այդ պահի դրությամբ որևէ պետական պաշտոն չի զբաղեցրել, հետևաբար՝ ոչ մի գործառութային պարտականություն չի կատարել և չէր էլ կարող կատարել:

ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի վարչական ապարատի ղեկավարի 2019 թվականի հոկտեմբերի 21-ի N 355 հրամանով զբաղեցրած պաշտոնից ազատվելու կապակցությամբ Փաստաբանը հանվել է 10564 զորամասի անձնակազմի ցուցակներից:

Ստացվում է, որ Փաստաբանը 2019 թվականի սեպտեմբերի 16-ից (եթե հիմք ընդունվի ՀՀ ԶՈՒ ԳՇ պետի 2019 թվականի հոկտեմբերի 11-ի N 1910-Ա հրամանը) և 2019 թվականի հոկտեմբերի 21-ից (եթե հիմք ընդունվի ՀՀ ԶՈՒ ԳՇ ՎԱ ղեկավարի 2019 թվականի հոկտեմբերի 21-ի N 355 հրամանը) որևէ պետական (զինվորական) պաշտոն չի զբաղեցրել:

Փաստաբանը նշել է, որ 2019 թվականի հոկտեմբերի 22-ի թվագրմամբ դիմում է ներկայացրել ՀՀ փաստաբանների պալատի նախագահին (դիմումը ՀՀ ՔՊ մուտք է եղել 2019 թվականի հոկտեմբերի 23-ին)՝ խնդրելով վերականգնել իր փաստաբանական գործունեության N 2179 արտոնագրի գործողությունը: Դիմումիս կից, ի թիվս այլնի, ներկայացրել է նաև ՀՀ ՔՈՒ ԳՇ պետի 2019 թվականի հոկտեմբերի 11-ի N 1910-Ա հրամանի լուսապատճենը:

Փաստաբանը կարևորել է, որ դիմումին կից ներկայացրել է հրամանի լուսապատճենը, այլ ոչ թե քաղվածք կամ տեղեկանք և այլն: Այդ փաստը հավաստում է այն հանգամանքը, որ ինքը ՀՀ փաստաբանների պալատի խորհրդին չի ներկայացրել սուտ տեղեկություններ, այլ հասցեագրել է դիմում, կցել է հիմնավորող փաստաթղթերի պատճենները և խնդրել բավարարել դիմումը

Փաստաբանը նշել է, որ ինքը փաստաբանական գործունեություն չի իրականացրել պետական կամ համայնքային ծառայության մեջ գտնվելու ժամանակ, քանի որ իր փաստաբանական գործունեությունն սկսել է 2020 թվականի հունվարի 8-ից, իսկ դրանից առաջ՝ 2019 թվականի դեկտեմբերի 23-ից արձակված է եղել ՀՀ զինված ուժերի պահեստազոր՝ ուղարկվելով հաշվառման ՀՀ Երևանի թիվ 1 զինվորական կոմիսարիատ:

Ընդհանրացնելով վերը նշվածը՝ Փաստաբանը նշել է, որ կարգապահական խախտում թույլ չի տվել և իր նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

Փաստաբանը ներկայացել է Խորհրդի նիստին իր ներկայացուցչի՝ Արթուր Ապիկյանի հետ, ով վերահաստատել է նախորդիվ ներկայացված բացատրությամբ Փաստաբանի հայտնածը, ինչպես նաև պնդել, որ վերջինս իր փաստաբանական գործունեության արտոնագիրը վերականգնելու պահանջով Պալատի խորհրդին դիմելիս չի հանդիսացել զինծառայող և ներկայացրել է 11.10.2019թ. թիվ 1910-Ա հրամանը, որում նշված է եղել Արթուր Հարությունյանին ազատել զբաղեցրած հաստիքից և նրան թողնել կադրերի տրամադրության տակ:

3.3. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.</u>

Կարգապահական գործի նախապատրաստման արդյունքում Նախապատրաստողը 22.12.2020թ. կազմել է եզրակացություն:

19.01.2021թ. ՀՀ ՔՈՒ գլխավոր շտաբի պետ Օնիկ Գասպարյանը ներկայացրել է առարկություն Նախապատրաստողի 22.12.2020թ. եզրակացության դեմ:

Կարգապահական գործը Խորհրդին է հանձնվել 28.12.2020թ.

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 09.02.2021թ. ժամը 19.00-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ,

թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (այսուհետ՝ **Փաստաբանի վարքագծի կանոնագիրք կամ Կանոնագիրք)** հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (**այսուհետ նաև՝ Կարգ**) 3.10.3 ենթակետի համաձայն՝ *Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. 11.10.2019թ. Զինված ուժերի գլխավոր շտաբի պետի կողմից արձակվել է թիվ 1910-Ա հրամանը Արթուր Հարությունյանին զբաղեցրած պաշտոնից ազատելու և կադրերի տրամադրության տակ թողնելու մասին:

2. 22.10.2019թ. Փաստաբան Արթուր Հարությունյանը դիմել է ՀՀ փաստաբանների պալատ խնդրելով վերականգնել իր փաստաբանական գործունեության արտոնագրի գործողությունը: Նույն դիմումի մեջ Արթուր Հարությունյանը նշել է հետևյալը՝ «*Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերացել է «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված փաստաբանական գործունեության արտոնագրի գործողության կասեցման հիմքը..*»:

3. 04.02.2020թ. ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետը արձակել է հրաման Արթուր Հարությունյանին պայմանագրային զինվորական ծառայությունից ՀՀ ԶՈՒ պահեստազոր արձակելու մասին:

4. Արթուր Հարությունյանը արտոնագրի գործողությունը վերականգնելուց հետո դիմել է հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով կազմակերպվող մրցույթին:

Վերոհիշյալ փաստերը հաստատվում են կողմերի բացատրություններով և գործի նյութերով, այդ թվում՝ ԳՇ պետի հրամանների և Փաստաբանի դիմումի պատճեններով:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Արթուր Հարությունյանը փաստաբանական գործունեության արտոնագիրն ստացել է 03.12.2016թ., և 2017-2021թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ կարգապահական վարույթ չի հարուցվել, բացառությամբ սույն կարգապահական վարույթի:

7. **<u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>**

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Արթուր Հարությունյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, 38-րդ հոդվածի 7-րդ մասի, ինչպես նաև Կանոնագրքի 2.5.1 և 2.9.3 ենթակետերի պահանջների խախտման համար՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:*

Օրենքի 38-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ *սույն հոդվածի 1-ին մասով[1] նախատեսված հիմքերը վերանալուց հետո փաստաբանի արտոնագրի գործողությունը վերականգնվում է փաստաբանների պալատի խորհրդի որոշմամբ՝ այն փաստաբանի դիմումի հիման վրա, որի արտոնագրի գործողությունը կասեցվել էր:*

Կանոնագրքի 2.5.1 ենթակետի համաձայն՝ *որպեսզի փաստաբանն իր գործունեությունն իրականացնի անկաշկանդ, անկախ և արդարադատություն իրականացնելու իր պարտականության հետ համահունչ՝ նրան արգելվում է փաստաբանական գործունեություն իրականացնել պետական կամ համայնքային ծառայության մեջ գտնվելու ժամանակ:*

Կանոնագրքի 2.9.3 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը չի կարող Պալատի խորհրդին ներկայացնել սուտ տեղեկություններ:*

****

<u>Կանոնագրքի 2.5.1 ենթակետի խախտման մասով</u>

Նախ, Խորհուրդը սույնով փորձում է պարզել, թե ինչ խնդիր է լուծում Կանոնագրքի 2.5.1 ենթակետում նշված արգելող կանոնը:

Այս կանոնը փորձում է կանխել պետական կամ համայնքային ծառայողներին զուգահեռաբար ունենալ փաստաբանի կարգավիճակ: Այդ պատճառով է «Փաստաբանության մասին» օրենքի 38-րդ հոդվածը պարտավորեցնում փաստաբանին կասեցման հիմքերի առկայության մասին տասնօրյա ժամկետում տեղյակ պահել փաստաբանների պալատի խորհրդին:

Տվյալ դեպքում, Խորհուրդը գտնում է, որ Կանոնագրքի 2.5.1 կետում սահմանված *«փաստաբանական գործունեություն իրականացնել»* եզրույթը պետք է կիրառելի լինի նաև այն դեպքում, երբ փաստաբանը որևէ գործողություն է կատարում օգտագործելով փաստաբանի իր կարգավիճակը:

Փաստաբանը դիմել է ՀՀ փաստաբանների պալատին հանրային պաշտպանի

[1] Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասը ի թիվս փաստաբանի արտոնագրի կասեցման այլ հիմքերի նախատեսում է հանրային ծառայության անցնելու հիմքը:

աշխատանքի անցնելու նպատակով 2019թ. նոյեմբերին անցկացվող մրցույթին մասնակցելու համար:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 15.01.2014թ. թիվ 01/7-Լ որոշմամբ հաստատված «Հանրային պաշտպանի աշխատանքի անցնելու նպատակով մրցույթի անցկացման կարգ»-ով **(այսուհետ՝ ՀՊԳ կարգ)** 1.5 կետը սահմանում է՝ *Հանրային պաշտպանի թեկնածուների համար մրցույթին մասնակցելու համար կարող է դիմել այն փաստաբանը, որի արտոնագիրը դիմելու պահին կասեցված չէ:*

Նշվածից հետևում է, որ Արթուր Հարությունյանն օգտագործել է իր գործող արտոնագիր ունենալու հանգամանքը, որպեսզի ունենա հնարավորություն մասնակցելու մրցույթին:

Նման պայմաններում ակնհայտ է, որ Փաստաբանն օգտվել է իր արտոնագրի գործողությունը վերականգնելու հանգամանքից և օգտագործել է այն դեռ այն ժամանակ, երբ արձակված չի եղել զինվորական ծառայությունից, այսինքն գտնվել է պետական ծառայության մեջ:

<u>Կանոնագրքի 2.9.3 ենթակետի խախտման մասով</u>

Փաստաբանը ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետի 04.02.2020թ. թիվ 112-Ա հրամանով համարվել է ՀՀ ԶՈՒ պահեստազոր արձակված միայն **23.12.2019թ-ից,** ուստի հենց այդ պահից է նրա զինվորական ծառայությունը դադարել:

Չնայած դրան, Փաստաբանի կողմից **22.10.2019թ**. դիմում է ներկայացվել ՀՀ փաստաբանների պալատ, որում նշված է, որ **վերացել է արտոնագրի գործողության կասեցման հիմքը:** Նույն դիմումին կցված է հրաման, որի համաձայն Փաստաբանը 2019թ. սեպտեմբերի 16-ից ազատվել է ՀՀ պաշտպանության նախարարության իրավաբանական բաժնի սպայի պաշտոնից՝ թողնվելով ՀՀ պաշտպանության նախարարության կադրերի տրամադրության տակ:

Վերը նշված դիմումը ներկայացվել է Պալատի խորհրդին որպես զինվորական ծառայությունը դադարեցված լինելը հավաստող ապացույց, ինչն էլ հիմք է ընդունվել Խորհրդի կողմից հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ դիմումով փաստաբանը հավաստիացրել է արտոնագրի գործողության կասեցման հիմքը վերացած լինելու մասին:

Օրենքի 38-րդ հոդվածի 7-րդ մասը իրավունք է վերապահում փաստաբանին արտոնագրի գործողությունը վերականգնելու դիմում ներկայացնել միայն այն դեպքում, երբ վերացել է արտոնագրի գործողությունը կասեցնելու հիմքը, ինչի մասին առկա է հստակ նշում Փաստաբանի կողմից ներկայացված դիմումով:

Խորհուրդը փաստաբանների հետ հարաբերություններում ղեկավարվում է վստահության կանխավարկածով և որպես այդ վստահության չարաշահումը կանխող գործիք պաշտպանված է Կանոնագրքի 2.9.3 ենթակետով:

Վերոգրյալը հաշվի առնելով Խորհուրդն արձանագրում է, որ Փաստաբանը ներկայացրել է Խորհրդին սուտ տեղեկություններ՝ արտոնագրի գործողությունը

վերականգնելու մասին դիմումով նշելով, որ վերացել է իր արտոնագրի կասեցման հիմքը, այնինչ դիմումը ներկայացնելու պահին այդ հիմքը վերացած չի եղել:

Փաստաբանի ներկայացրած այն փաստարկը, որ Պալատի խորհրդին է հանձնվել Զինված ուժերի գլխավոր շտաբի պետի 11.10.2019թ. թիվ 1910-Ա հրամանի պատճենը, հետևաբար խախտում թույլ չի տվել, Խորհուրդը հիմնավոր չի համարում, քանի որ Փաստաբանն իր դիմումի մեջ նշել է տեղեկություն՝ «Փաստաբանության մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված փաստաբանական գործունեության արտոնագրի գործողության կասեցման հիմքը վերացված լինելու մասին, ինչը փաստացի սուտ է:

Պալատի խորհուրդը, վստահելով Փաստաբանի հայտնած տեղեկությանը Զինված ուժերի գլխավոր շտաբի պետի 11.10.2019թ. թիվ 1910-Ա հրամանը համարել է բավարար հիմք արտոնագրի գործողությունը վերականգնելու համար, մինչդեռ զինվորական ծառայության առանձնահատկությամբ պայմանավորված այդ հիմքը բավարար չի եղել: Խորհրդի կողմից Փաստաբանի արտոնագրի գործողությունը վերականգնելը որևէ կերպ չի արդարացնում Փաստաբանի կողմից Խորհրդին սուտ տեղեկություններ ներկայացնելու վարքագիծը:

Խորհուրդն սույնով քննարկման առարկա է դարձրել Փաստաբանի՝ Խորհրդին սուտ տեղեկություններ ներկայացնելու վարքագիծը:

Կարգապահական տույժի ընտրությունը.

Օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի խորհուրդը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի՝*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) մասնակցել լրացուցիչ վերապատրաստման դասընթացների

4) տուգանք

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Խորհուրդը հաշվի է առնում վերոնշյալ հանգամանքները, այդ թվում՝ խախտման բնույթը, մեղքի աստիճանը, ինչպես նաև փաստաբան Արթուր Հարությունյանի անձը բնութագրող հանգամանքները, ինչից ելնելով գտնում է, որ Արթուր Հարությունյանի նկատմամբ պետք է կիրառել՝

- «խիստ նկատողություն» կարգապահական տույժը Կանոնագրքի 2.9.3 ենթակետի խախտման համար.

- «նկատողություն» կարգապահական տույժը Կանոնագրքի 2.5.1 ենթակետի խախտման համար:

Նկատի ունենալով, որ Փաստաբանն առաջին անգամ է խախտում թույլ տվել, Խորհուրդը նվազ տույժը կլանելով խիստ տույժի մեջ, փաստաբան Արթուր Հարությունյանի նկատմամբ կիրառում է «խիստ նկատողություն» կարգապահական տույժը:

Խորհուրդը գտնում է, որ փաստաբանի վարքագծի կանոնին հակասող արարքը (կարգապահական խախտումը) կատարված է դիտավորությամբ, քանի որ Փաստաբանը գիտակցել է իր վարքագծի ոչ իրավաչափ (փաստաբանի վարքագծի կանոնին հակասող) բնույթը:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7- րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով,

Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ***Փաստաբան Արթուր Հարությունյանին (արտոնագիր՝ թիվ 2179) ճանաչել մեղավոր «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, 38-րդ հոդվածի 7-րդ մասի, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.5.1 և 2.9.3 ենթակետերի պահանջներին խախտման համար:***

2. ***Փաստաբան Արթուր Հարությունյանի նկատմամբ (արտոնագիր՝ թիվ 2179) կիրառել կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն:***

3. ***Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել Դիմողին և փաստաբան Արթուր Հարությունյանին:***

<u>Ծանոթություն.</u> Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Արայիկ Ղազարյան

09 փետրվարի 2021թ.
թիվ ԿԳ/147-Ա
ք. Երևան